ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում Հայաստանին տրված առաջարկությունները իրավապաշտպանների իրավունքների պաշտպանության առնչությամբ

2020թ-ի հունվարի 23-ին Ժնևում ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում տեղի ունեցավ Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) երրորդ շրջանի ՀՀ ազգային զեկույցի քննարկումը: ՄԱԿ անդամ երկրների շուրջ հարյուր ներկայացուցչություններ հանդես եկան Հայաստանում մարդու իրավունքներին վերաբերող ելույթներով, ներկայացրին հարցադրումներ և հանդես եկան առաջարկություններով:

Ստորև ներկայացված են առաջարկությունները, որոնք անմիջապես առնչվում են իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությանը, ընդունվել են ՀՀ կառավարության կողմից:

Լիտվա
Կրկնապատկել ջանքերը՝ ստեղծելու քաղաքացիական հասարկության, իրավապաշտպանների եւ լրագրողների կողմից իրենց գործունեության իրականցման համար նպաստավոր միջավայր, միեւնույն ժամանակ երաշխավորել, որ լրագրողների եւ իրավապաշտպանների, հատկապես նրանց, ովքեր խտրականության դեմ պայքարի եւ կանանց իրավունքների պաշտպանության ոլորտներում են աշխատում, նկատմամբ սպառնալիքներն ու հարձակումները պատշաճ ձեւով քննվում են:
Չեխիա
Ներդնել համապատասխան ջանքեր սահմանելու համապարփակ մեդիա կարգավորումներ՝ ներառյալ իրավական մախանիզմներ այն մասին, որ կապահովեն մեդիա սեփականատերերի թափանցիկությունը եւ հանրային հեռարձակողների անկախությունը:
Ֆրանսիա
Երաշխավորել մեդիայի եւ արտահայտման ազատությունը՝ ապահովելով լրագողների եւ իրավապաշտպանների պաշտպանվածությունը:
Նորվեգիա
Իրավապաշտպանների նկատմամբ առկա հարձակումների եւ սպառնալիքների դեպքերով իրականացնել արագ, անկախ, արդար քննություն՝ ապահովելով, որ իրավախախտները ենթարկվեն պատասխանատվության:
Ավստրալիա
Վերջ տալ իրավապաշտպանների նկատմամբ հարձակումների շուրջ ստեղծված անպատժելիության մթնոլորտին՝ իրականացնելով արագ, անաչառ եւ արդյունավետ քննություն եւ հետապնդել նրանց նկատմամբ սպառնալիքները եւ բռնությունը:

Ավստրիա
Ապահովել իրավապաշտպանների նկատմամբ առկա սպառնալիքների և հարձակումների անհապաղ և արդյունավետ քննություն
Բելգիա
Իրավապաշտպանների նկատմամբ հարձակումների դեպքերով իրականացնել անկախ, արագ, արդյունավետ և անկողմնակալ քննություն՝ բացառելու նման հարձակումների հեղինակների շրջանում անպատժելիության ընկալումները:
Կանադա
Ընդունել ատելության խոսքը կանխարգելող եւ դրա դեմ պայքարի օրենսդրություն եւ ձեռնարկել կոնկրետ քայլեր՝ վերջ տալու իրավապաշտպանների դեմ արշավներն ու սպառնալիքները:
Էստոնիա
Աջակցել իրավապաշտպաններին՝ հանրային ձեւով օժանդակելով նրանց այն պարագայում, երբ կան նրանց նկատմամբ սպառնալիքներ:
Շվեդիա
Ձեռնարկել քայլեր՝ պաշտպանելու իրավապաշտպաններին եւ քաղաքացիական հասարակությանը ոտնձգություններից: